# ԲՆԱԿԱՆՔ

## ՏՕՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

*Նոյեմբեր ամիսը։*

Երբոր Հռոմուլոս իր հիմնած քաղաքին ժողովրդեան օրէնքներ տալ ուզեց ու քաղաքական կենաց կարգ դնել, իր տարւոյն իններորդ ամսուն Նոյեմբեր անունը տուաւ, որ մինչև ցայսօր անփոփոխ մնաց։ Այս ամիսն սկզբան 30 օր ունէր, բայց քիչ տևեց ասիկայ. Նումա՝ հաւանականաբար Եգերիա յաւերժհարսին խորհրդովն, որ անզգուշութեամբ... Թուերը կ'ախորժէր, կամ լաւ ևս ասել՝ ժողովրդեան նախապաշարմունքները գոհ ընելու համար (որովհետև յայտնի է Եգերիայի պատմութեան սուտ ըլլալը), օր մը վերուց Նոյեմբերէն, որով ունեցաւ անիկայ 29 օր։ Բայց երբ Յուլիոս Կեսար նորոգեց հռոմէական տօմարը, արհամարհեց ամենայն նախապաշարմունքներն, և Նոյեմբեր ամիսն ալ առջինին պէս 30 օրուան վերածեց։ Որովհետև միտքը դրած էր որ աւելի աղէկ էր արևուն ու լուսնին ընթացքին համեմատ կարգ մը դնել տարւոյն, քան թէ իր նախնեաց մոլորութիւններուն հետևիլ։

Հռոմայեցիք Նոյ. ամիսն Մտօղիկի ընծայած էին։ Նոնայքը ամսուն 5ին կու գային և Իդոսն 13ին. Նոնայէն օրն 'ի պատիւ Պոսիդոնի խաղեր կը սկսէին և ութ օր միակերպ կը տևէին։ 15ին, Կրկեսին մէջ հասարակաց խաղեր կը հանդիսանային ու իրեք օր կ'երթային. 18էն սկսեալ մինչև 'ի 21, տօնավաճառ կ'ըլլար, և 21ին՝ Լիբերալեան կամ օդան-դուրանճան հանդէսները կը սկսէին, որ ժամանակն որ պատանիք Պրէդէքստա պատմուճանը թողլով՝ Լիբերա կամ ազատ պատմուճանը կը հագնէին. վերջապէս 27ին, զոհ մը կը կատարուէր այն Կելտաց և Յունաց տօներներուն հա-

մար՝ որոնց մնացորդներն Անտանէն վե
ցուած էին։

Գրեթէ ամբողջ Նոյ. ամիսն աշն
վերջին մասին. մէջ սեպելու է, որ
վորաբար ձմեռուան կերպարանք
կ'առնէ հիւսիսային երկիրներու մէ
Արևը քիչ կը կենայ հորիզոնին վրա
օրուան երկայնութիւնն է ամսու 1
9 ժամ և 51 րոպէ, 15ին՝ 9 ժ. և 9 ր
իսկ 30ին՝ 8 ժ. և 33 ր.։ Նուազե
նուազութիւնն է 44 ր., և երեկոյ
նը՝ 34 ր.. ամբողջական նուազութ
նը՝ 1 ժ. և 18 ր.։

Արևն հետզհետէ կը հեռանայ հ
սարակածէն ձմեռուան արևադար
ձնելու համար. և Նոյ. 15ին՝ 21-
աստիճանի միջօրէական բարձրութ
ունի։ Հետևաբար իր ճառագայթնե
շատ խոտորնակի կ'իյնան երկրիս վրա
և քիչ տաքութիւն կը սփռեն։ Նա
կով այս ամսուս միջին բարեխառն
թիւնն հոկտեմբերի բարեխառնութ
կէսն է։ Հոկտեմբերի վերջերն բո
որ հիւսիսային աշխարհները 0էն վ
կ'իջնայ երբեմն ջերմաչափը, իսկ Նոյ
մէջ ստէպ կը հանդիպի այս բանն
տեղուանքը, և երբեմն ինչուան
աստիճանի կ'իջնայ բարեխառնութ
նը՝ որչափ որ կրնայ տեսնուիլ յաւ
րի մէջ. 1858 տարւոյն Նոյ. մէջ՝ ջե
մաչափն ինչուան 4°, 30 ցուցուց 0
վար 'ի Բարիզ։ Ամսուս մէջ շատ եղ
կիրներ ձիւն ալ կու գայ, մանաւա
ուր որ լեռներ շրջապատած են։

Պայծառ օդ եղած օրերը գրեթ
եղեամն անպակաս է. և սառոյցն
կը սկսի երևնալ. Օրվաւ մօտ դդը
գաւառներ կան՝ որոնց Նոյեմբերն է
բեմն տարւոյն ամենէն ցուրտ ամիսն
րէն մէկն է, թէ ցած բարեխառնու
թեանն, և թէ ցուրտ քամիներուն հ
մար որ ամսուս մեծ մասը կը տիրեն։

Արևն ամսուս առաջին օրը Կ
համաստեղութեան աջ ոտքին ծայ
է, և 3ին՝ Կշիռք համաստեղութե
մէջ կը մտնէ, որուն հարաւային կող
նայող նժարէն կ'անցնի. 22ին, իր
կուան ժ. 7. ր. 22., Աղեղնաւո

Generated on 2017-07-12 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.c2847014
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

...ին մէջ կը մնէ, և 23ին՝ կը մօտե-
կարիճ համաստեղութեան: Սեր-
էս 30ին, այդ յետին համաստեղու-
ան մէջ կ'ըլլայ մօտ այն կէտին՝ ուր
ակալ համաստեղութեան ոտքը
լէ ձմեռ գկարիճը:

...ուսինն, որ պայծառ գիշերներն իր
...ր գեղեցկութեամբը կը փայլի, ամ-
2ին՝ երեկոյեան ժ. 4. ր. 28. իր
...ջին քառորդն է. իր երկրէս վերջին
...աւորութեանը կը հասնի 3ին, և
...՝ իրիկուան ժ. 2. ր. 14. հանդի-
...յացութեան կէտն է: Այդ օրը՝ ի-
...ուան ժ. 3. ր. 53. կը ծագի, և
...որդ առաւօտը ժ. 8. ր. 20. մա-
...ը մնէ, ամբողջ գիշերն իր լուսա-
...ւթիւնը ցուցընելով, որ աստեղաց
...ին լուսոյն կը յաղթէ և արգելք
...լայ աստղներու զննութեանը, ո-
...մեծ խումբ մը երկնից երեսէն կը
...ի ամսուս 12-13ին: 17ին, գիշե-
...ն աստղը երեկոյեան ժ. 1. ր. 15.
...վերջին քառորդն է, և 24ին՝ իրի-
...ան ժ. 1. ր. 52. լծորդութեան
...ն հասած է և երկրիս բոլոր բնակ-
...աչքէն կ'աներևութանայ: Թէ որ
...նի մէջ մարդիկ եղած ըլլային, նոյն
երկիրս բոլորովին լուսաւորուած կը
...նային 2 աստիճան տրամագիծ ու-
...ող սկաւառակի մը ձևով: Լուսինն,
...որևուն արևմտեան կողմն էր, 27ին
...կսի արևելեան դին երևնալ՝ 34-35
...իճանի հեռաւորութեամբ, և այն
...ենէն սկսեալ արևէն կը հեռանայ:
...ն, առաւօտեան ր. 47, Անտարէսը
...ածկէ:

...րյ. մէջ Փայլածուն շատ աղէկ կըր-
դիտուիլ, մանաւորապէս ամսուն
...ջերը: 2ին, արևէն 33 րոպէ վերջը
...ը կը մտնէ, իսկ 29ին՝ 1 ժ. և 19
...վերջը: 25ին, իր արևէն հեռաւո-
...թեան վերջին կէտը կը հասնի. 26ին,
...ուօտեան ժ. 9. լուսնին քովէն
...ցնի:

Լ. Լը Վեռիէ հռչակաւոր աստղա-
...ը Փայլածուին պարբերութեանը
...շատ զննութիւններ ընելէն վերջը՝
...երս կը հաստատէր թէ պէտք է որ
մոլորակային մարմին մը, կամ գոնէ խումբ
մը աստեղատիպք գտնուին այս մոլորա-
կին և արևուն մէջ տեղը: Հաւանա-
կան կ'երևայ այս կարծիքն այն բազ-
մաթիւ այլայլութիւններուն համար՝
որ կը կրէ անոր շրջանը, մանաւանդ
յետ որոյ որ Ուրանոսի այլայլութիւն-
ներէն Պոսիդոն մոլորակը գտաւ Լ.
Լը Վեռիէ: Արդէն դժուարին է Փայ-
լածուն դիտելը՝ իր արևուն մերձաւոր
ըլլալուն պատճառաւը. ուստի կրնայ
ըլլալ որ միջակ մեծութեամբ մոլորակ
մը ըլլայ նշանակեալ տեղն ու ոչ ոք կըր-
ցած ըլլայ ինչուան հիմա տեսնալ զայն:

Արուսեակն ամսուս մէջ ամենևին
չկրնար դիտուիլ: 25ին, երեկոյեան ժ.
8., լուսնին մօտէն կ'անցնի: — Հրա-
տը, որուն առերևոյթ տրամագիծն օրէ
օր կ'աճի, յարմար է դիտուելու: 2ին,
առաւօտեան ժ. 3. ր. 37. կը ծա-
գի. 21ին, առաւօտեան ժ. 9., լուսնին
մօտ է. 26ին, առաւօտեան ժ. 3. ր.
25. կը ծագի: — Լուսնթագն, որուն
պայծառութիւնն հաւասար է Արու-
սեկին, 8ին՝ առաւօտեան ժ. 4. ր. 38.
'ի միջօրեայն կը հասնի. 15ին, առաւօ-
տեան ժ. 10. լուսնին մօտ է: Իր ար-
բանեակները դիւրաւ կը դիտուին բոլոր
ամսուս մէջ, մանաւանդ կէս գիշերուն
միջոցները: — Երևակն ամէն օր կը
տեսնուի կէս գիշերուընէ սկսեալ. 17ին,
երեկոյեան ժ. 4. լուսնին մօտիկ կ'անց-
նի: — Ուրանոսը, որ դիտողութեան
յարմար է, 28ին՝ առաւօտեան ժ. 11.
հանդիպակաց կ'ըլլայ արևուն. իսկ կէս
գիշերուն 'ի միջօրեայն կը հասնի:

Շատ փորձերով հաստատուեցաւ որ
նոյ. 12ին կամ 13ին աստուպի անձրև մը
կը թափի՝ նման Ս. Լաւրենտիոսի անձրև-
ըսուածին, որ օգոստոսի 10ին կու գայ:
1833-37 տարին եղած դիտողութիւն-
ներն այն երկիրներուն մէջ որ կը բաժ-
նեն զՄեխիգոյ Հուրոն լճէն՝ ցուցու-
ցին որ այս տիեզերական մետէորայից
իրարմէ բաժանման կեդրոնն էր Առիւ-
ծին γը: 1839-47 տարին Այս գի-
տունը 407 աստուպ դիտեր է, որոնցմէ
171ը Պերսէոսին մէկ կէտէն սահած

Generated on 2017-07-12 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.c2847014
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

էին՝ Մեդուսայի դին մօտ. 83 հատը Առիւծէն, 35՝ Կասիոպէէն, 40՝ Վիշապին գլխէն և 78 հատ անորոշ կէտերէ :

Նոյ. մէջ ինկած աստղերն աւելի նուազ են թուով՝ քան օգոստոսի մէջ : 1799 և 1833 տարիներուն Նոյ. ամսուն մէջ խիստ բազմաթիւ եղան աստղերը. Պ. Օլպէրս աստղաբաշխը կը կարծէ որ նոյն երևոյթը 1867ին ատենները նորէն պիտի տեսնուի :

Նոր տօմարի 1859ին Նոյ. 1ը՝ Հրէից 5620 տարւոյն Խէշվան ամսուն 4ին կը պատասխանէ, և Տաճկաց 1276 տարւոյն Ռեպիւլ-ախըր ամսուն 6ին : Հրէից Քասլէվ ամիսը կը սկսի Նոյ. 27ին, և Տաճկաց Ճէմազիւլ-էվվէլ ամիսը Նոյ. 25ին :

Գաղղիոյ հասարակապետական 6[...] տարւոյն Բռամբեր ամսուն 10ը Նոր տօ[...] 1859 տարւոյն Նոյ. 1ին կը պատասխ[...] նէ, և Ցրտաբեր [1] ամսուն 1ը՝ Նոյ. 2[...] կը հանդիպի :

Արևմտեան եկեղեցւոյն Նոյ. առա[...] օրն Ամենայն սրբոց տօնախմբութի[...] կը կատարէ, և երկրորդ օրն ալ Մ[...] ռելոց նուիրած է, յորում կ'աղօթ[...] հաւատացեալք հանգուցեալ հոգ[...] համար, և օրուան մէկ մասն ալ [...] րեզմանատուներու այցելութեան եր[...] լով կ'անցընեն : Հայկական եկեղե[...] այն տարիներն որ Ս. Գէորգայ տօ[...] մինչև 'ի Յիսնակաց բարեկենդանն ո[...] շաբաթ կը հանդիպի՝ ութերորդ շա[...] թուն վերջին օրը Ամենայն սրբոց տօ[...] կը կատարէ :

## ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Մեղրին օգտակարութիւնը ծերութեան առողջութեան :
— Հին ատենի իմաստունները մեղրն ընդհանուր և խիստ օգտակար դեղ մը կը սեպէին. ինչուան շատ ծերեր կ'ըսէին թէ մեղր ուտելով էր որ իրենց խոր հասակին հասեր էին. ինչպէս Դեմոկրիտոս Աբտերացին՝ որ 109 տարեկան էր, Անակրէոն՝ 115 տարեկան, Պոլլիոս-Հռոմուլոս՝ որ 100 տարին անցեր էր, և այլն : Հիպոկրատ անուանի բժիշկը խորհուրդ կու տար մեղր ուտելու երկար ատեն ապրելու համար, և ինքն ալ պարարտ ծերութեան հասաւ : Հին Ցոյներն իրենց գինիները մեղրով կ'անուշցընէին. անկէ զատ՝ անով ըմպելիք մ' ալ կը շինէին, որ շատ կը գործածուէր իրենց մէջ : Անակրէոն շատ կ'ախորժէր այդ ըմպելիքը, և անիկայ խմելէն վերջը կը շինէր իր զուարթ տաղերը : Ցոյն և հռոմայեցի ըմբիշներն ոչ երբէք ասպարէզը կ'իջնային առանց առաջուց մեղր ուտելու : Կ'ըսուի թէ Պիւթագորաս և Դեմոկրիտոս հացով ու մեղրով կ'ապրէին, մտքերնին դրած ըլլալով որ այս կերպով կեանքերնին կ'երկըննար և մտքերնին աշխոյժ ու զօրաւոր կը մնար :

Նոր բանաստեղծական երկասիրութիւն մը : — Պ. Վիկտոր Հիւկոյ գաղղիացի արդի հռչակաւոր բանաստեղծը, որ այնչափ անուն հանած է իր Ներքին Ձայնք և Տերևք Աշնանայինք ըսուած տաղերու հաւաքմունքներովը, և որ հիմա Գաղղիայէն հեռու կը բնակի իր քաղաքական անկախ կարծեացը պատճառաւ, վերջերս քերթուածոց նոր հաւաքում մ' ալ հրատարակեր է՝ Մտքեան Դարուց անունով. ասոր մէջ ամբաւ զանազանութիւն կայ պա[...] կան նիւթերու, բայց հեղինակը գրքին յառա[...] բանին մէջ կ'ըսէ՝ թէ ասոնց ամէնը սկզբնաւոր[...] թիւն մըն են և միութիւն կազմող մասունք [...] մտածութեան մը, կամ թէ ըսենք մարդկային ը[...] հանուր դիւցազներգութեան մը, զոր ուրիշ [...] թուածներով պիտի ամբողջացընէ : Այս պատ[...] ռաւ գեռ սոյգ և ապահով դատաստան մը [...] նար ըլլալու այս նոր 'ի լոյս ելած երկու հա[...] ներուն վրայ. սակայն անանկ մը կ'երևայ՝ որ Հիւկոյի հանճարն հասակին հետ (57 տար[...] է քերթողը) սկսեր է բանաստեղծութեան Պ[...] գոսին ծայրէն դէպ 'ի վար իջնալ : Ցիրաւի [...] դուս կարեկցութիւնն ու գորովը կը շարժէ [...] խորին մեծարանաց հետ, երբոր կը տեսնէ որ [...] խակ հեղինակն ինքն իր անձին վրայ կը խոստո[...] այս տխուր ճշմարտութիւնն հետևեալ չորս [...] մառօս տողերուն մէջ, զորոնք իր քերթուած[...] ճակատը դրած է՝ իբրև ընծայական մը առ [...] հայրենիս.

Առ Գաղղիա

Ըղքեղ, Մատեանդ, տարցի հող
Ի Գաղղիա ուր ծընայ.
Արմատաքին խըլեալ ծառ
Ջմեռեալ տերեւն ընծայէ։

ՎԻԿՏՈՐ ՀԻԿՈՅ

[1] Գղ. Frimaire.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

Generated on 2017-07-12 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.c2847014
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA